

ՄԱՌԻՔԱՆԳԱՆ ԲԱԶՄԱՎԻՊԻ

ՆՈՐ ՀԱՐՑՄՈՒՆԳ

1. ԹՈՒՈՑ ԳԱՂՏՆԻԳ ՄԸ

Առանձնական նամակէ մը « Տարւոյս Սոթհանգրակի հարցմանց մէջ կարդացի շատ մը բաներ՝ որոնց պատասխան տալիս իմ գիտութեանէս ու հասակէս ալ վեր էիմ, և եթէ ամենեւեմ ծօրէմ կ'ուզէք ըսնա՝ ամենց տրուած պատասխաններն ալ իմ ըմբռնողութեան վեր էիմ զիստէ՞ք որչափ փափաքելի և սթափական է (որպէս զի չընես տեսակ մը պարծենկոտութեան միւթ է)՝ դպրոցականի մը՝ իւր սովորած չափիմ մէջ՝ կնճիւղներ լուծել, դժուարութեանց յաղթող երեւել, և . . . Սոթհանգրակի մրցամակներէն մէկը կորզել՝ լուծելով օրինակ իմն (որպէս զի իմ սիրած միւթիս մեծեցընեմ)՝ թուարանական կամ գրահաշուական կամ երկրաչափական առաջալիկ մը . . . » : — Պոտիս. Ազնիւ պատանի, զիջանելով փափաքանալով՝ Սոթհանգրակն այս ամգամ հետեւեալ առաջալիկ կ'ընէ յատկապէս քնդի և քո համատիրոց համար, և քաջագոյն լուծողին կը խոստանայ դպրոցականի մը յարմարագոյն լատագոյն մրցանակը : — Գլխին, պարտնիկ, թէ թիւերն ալ (որ ստոյգ գիտութեանց հիմունք կը համարուիմ) ունին իրենց խաբէական հմարքները, որով արտաքին երեւութի մերքեւ կրնան երբեմն ստույգութիւն կամ սխալ՝ հշմարտութիւն կամ ուղիղ կեղծել և այնպէս ալ որեւիցեք ծախել . . . Իսկ քու չանքդ պիտի լինի այդ արտաքին քող մէկդի առնուլ և սխալը մէջտեղ հանել : Օրինակ իմն, զիտես դուք ի հարկէ, որ

Դրմայ լինել . . . $a > b$
 Հետեւաբար . . . $a = b + c$
 Հետեւաբար . . . $a = b - c$
 Եւ թէ . . . $(a - b) (a - c) = c (a - b)$
 Ուստի . . . $a^2 - ab - ac + bc = ac - bc$
 Իսկ փոխադրելով. $a^2 - ab - ac = ab - bc - bc$
 Ամփոփելով. . . $a (a - b - c) = b (a - b - c)$

Ջնշեղով հաւասար արտադրելներն երկու կողմէն, կը մնամ $a = b$:

Արդ, իմնպէս կարելի է որ a հաւասար լինի b թիւ, քանի որ զիտեսք թէ $a > b$: Ուրեմն սխալը յայտնի է, քայց վերոյգրեալ գործողութիւնն ալ ուղիղ երեւոյթ մ'ուծի : Ուրեմն իմն բանի մէջ է այդ գործողութեան զադանքը, և իմնպէս կրնան դուք ապացուցանել որ a չէ հաւասար b : . . . Յուսամ որ վարժապետիդ պիտի չդիմես լուծելու համար :

ԹՈՒՄՍԻՐ

ԳԵՂԵՑԿԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շար. տես յէջ 352)

ՊՐԱԿՐ

ԵՆԹԱԿԱՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍՏՈՒԹԻՒՆ ԳԵՂԵՑԻՒՆ

ԳԼՈՒԽ Բ

Ձգայարանական և զգայական գեղեցիկն աստիճանաւորումը. — Եսակամ, Եսայլական և այլական զգացումը. — Թելադրութեանց (Suggestion) ազդեցութիւնը. — Դմացական կամ մտային երեւոյթք. — Ինդուտայել, Կէօթէ, Ֆուքէ. — Բարձրագոյն աստիճան գեղեցիկն ըմբռնում խտալը. — Մտքին երկմաթիւն սլացք ու գծեմաքարէ գեղեւումը :

Ա. — Եթէ բաական ուսպին շղային հոսանք մը զգայարանաց ստորին զօտայն մէջ յատակ և կենդանի պատկերներու վերածուել յետոյ՝ իւր կորովին մէկ մասը տակաւին անովժար կը պահէ, հետզհետէ կը յառաջէ գէպի մատայնոյն զօտին, զգացումը կը յուզէ, և այնու աւելի բարձր և ազնիւ գեղեցիկ մը կը գոյանայ քան զայն որ պարզապէս զգայարանաց մէջ առանձնափակ է, և